

խաններուն գործածութեան համար էր: (Kaidl-Gesch. Der Buckowina, II S. 97):

Սուչովայի հայերը շնորհիւ իրենց ստացած իշխանական արտօնութիւններուն, Արեւելքի հետ իրենց ունեցած ծանօթութեան եւ իրենց ունեցած վաճառականական ընդունակութիւններուն՝ կարճ ժամանակի մէջ իրենց համար ստեղծեցին նիւթական նախանձելի գլուխներ: Անոնք սկսան ընդարձակ առեւտուր Արեւելքի զանազան ապրանքներու, մեծ զարկ տուին եղնավաճառութեան եւ խոզավաճառութեան, սկսան պարապել կաշեգործութեամբ եւ խաղախորդութեամբ, եւ միջնորդի դեր կատարել Պուքովինայի եւ շրջակայ երկիրներու առեւտուրին միջեւ:

Սուչովայի եւ ընդհանրապէս Պուքովինայի մէջ կաշիի առաջին գործարան հիմնողը հայերն էին եւ կը պատրաստէին գլխաւորաբար կարմիր կաշի հունդարական ազնուականներու գործածած կարմիր կօշիկներուն համար: Ասկէ զատ մեծ քանակութեամբ ծխախոտ կը ներածէին Պուքովինա եւ Աւստրիոյ ուրիշ նահանգները, երբ դեռ ծխախոտը մենաշնորհի ենթարկուած չէր: Անասնավաճառութեամբ կարենալ պարապելու համար՝ հայերը ստիպուած էին ունենալ սեփական արօտավայրեր, այնպէս որ Սուչովայի հայերը շուտով դարձան կալուածատէր, աժան գիներով ձեռք ձգելով գիւղեր, ագարակներ եւ արօտավայրեր:

Եղաւ ատեն մը, երբ Պուքովինայի խոշոր կալուածատէրերուն մէկ երրորդը հայերն էին:

Սերէթ քաղաքն ալ իր մաքսատունը ունէր, ուր մաքս կ'անէին կաշիի, ոչխարի մորթի եւ բուրդի համար: Սերէթն ալ, — ուր դժուար կարելի է հայու հետք գտնել, — գլխաւոր կայաններէն մէկը եղած է հայ առեւտրականներուն: Սերէթն էր Պուքովինայի ամենահին քաղաքը, ուր ատեն մը նստած են նոյնիսկ Մոլտովայի իշխանները, եւ իբր այդպիսին կը հրապուրէր հայ առեւտրականը:

Չերնովիցի մէջ մաքսը կ'որոշուէր ըստ կառքերու: Գերմանական կառքերէն 4 զրուշ կ'առնէին, իսկ 6 զրուշ հայոց սայլէն կամ կառքէն: Չերնովիցը եւս եղած է հայ առեւտրական կեդրոն մը երբեմն, շնորհիւ իր աշխարհագրական դիրքին, գտնուելով առեւտրական այն

նշանաւոր ճամբուն վրայ՝ որ կը կապէր Մոլտովան Աւստրիոյ զանազան քաղաքներուն հետ:

ՄՈՒՏՈՎԱՅԻ ՄԷՋ

Պուքովինայի սոյն քանի մը քաղաքներէն յետոյ՝ բուն Մոլտովան է որ հայ առեւտուրին թատր կը դառնայ:

Մոլտովայի մէջ հայերը «Եօթը Քաղաք» շէնցուցած են, կ'ըսէ աւանդութիւնը: Եթէ այդ Եօթը ոստաններէն մէկը Սուչովան է, միւս վեցը բուն Մոլտովայի մէջ է որ կ'իջնան, — Պօթօջան, Հօթին, Տօրօօյ, Եաշ, Վասլիու եւ Կալայ:

Մոլտովայի այս քաղաքներուն մէջ հայերն են եղած, մանաւանդ ԺԵ. եւ ԺԶ. դարերուն, զլիաւոր առեւտրական տարրը՝ ինչպէս կը վերկայեն ուսմէն պատմիչները: Յետոյ է որ մըրջորդներ եկած գտած են զիրենք, մանաւանդ յոյներն եւ ապա հրէաները: Այնպէս որ ԺԸ. դարու վերջերը հայոց դերը արդէն հասած էր երկրորդական աստիճանի մը, յաջորդ դարուն աւելի եւս շիջելու համար:

ԺԸ. դարու վերջի Ռումանիան նկարգրած ատեն, հայր Դուկաս Ինճիճեան (Աշխարհագրութիւն Չորից Մասանց Աշխարհի, Եւրոպա, հատոր Զ., Վենետիկ, 1804, էջ 183) Ուլահ-Պուգտանի (Վալաքիա եւ Մոլտովա) վաճառականութեան մասին խօսելով կ'ըսէ.

«Բնիկ վաճառականները մեծ մասամբ առեւտուրը իրենց միջեւ կ'ընեն, եւ ենթակայ են Մեծ Քամարաշին (զանձապետ իշխանին). անոնց մէջ բնիկ հայեր եւ հրէաներ ալ կան: Իսկ արտասահմանի հետ առեւտուրը օտարներուն ձեռքն է, որոնց գլխաւորներն են Ալպանացիները, Եանիացիները, Թրանսիլվանիա բնակող Ռումէնները, Լեհաստանի Կալիցիա գաւառը ապրող Հրէաները: Կալիցիոյ վաճառականներուն մէջ մեծ թիւով հայեր կան, որոնք վարձու բռնած են Մոլտովայի մէջ բազմաթիւ հողեր, անասուններու արօտի համար. հոն սնուցանելով իրենց զնած անասունները վաճառելու կը տանին Լեհաստան եւ Գերմանիա: Իշխանները այդ հայ վաճառականներուն զանազան ժամանակներու մէջ նպաստներ եւ արտօնութիւններ շնորհեցին, մանաւանդ Իօն Նիքօլա իշխանը: Բայց որովհետեւ իշխանը 1784